MYINVEST

# Ինչպե՞ս օգտվել հարթակից




*Ուղեցույցը նախատեսված է այն հաճախորդների համար, որոնք ունեն Ամերիաբանկի բրոքերային հաշիվ

# Ինչպե՞ս տեղադրել արժեթղթի պատվեր

# Մուտք գործեք «Ինչ գնել» բաժին

- ✓ Մուտք գործեք **MyAmeria** հավելված:
- ✓ Բացեք «**MyInvest**» հարթակը:
- ✓ Ընտրեք «**Ինչ գնել**» բաժինը:

Բաժինը նախատեսված է բաժնետոմսերի և պարտատոմսերի որոնման համար:

Կարող եք տեսնել առանձնացված արժեթղթերի ցանկերը, ինչպես նաև այդ պահին գործող արժեթղթերի տեղաբաշխումները:



2

## Փնտրե՛ք արժեթուղթը

Որոնման դաշտում գրե՛ք **արժեթղթի** բորսայական հապավումը (ticker) կամ թողարկողի անվանումը

կամ

Ընտրե՛ք արժեթղթի համապատասխան խումբը և գտե՛ք արժեթուղթը



3

# Ֆիլտրե՛ք արժեթղթերն ըստ չափանիշների և ընտրե՛ք

Արդյունքներ դաշտի աջ վերևի հատվածում սեղմե՛ք ֆիլտրի նշանի վրա

Ընտրե՛ք այն չափանիշները, որոնցով ցանկանում եք ֆիլտրել արժեթղթերը

Սեղմե՛ք «կիրառել» կոճակը և տեսե՛ք համապատասխան արժեթղթերը

Ցանկից կարող եք ընտրել այն արժեթուղթը, որով ցանկանում եք գործարք կատարել



# Լրացրե՛ք համապատասխան պատվերը

Ընտրե՛ք գործողության տեսակը՝ **առք** կամ **վաճառք**

Լրացրե՛ք արժեթղթի **քանակը** կամ **ծավալը*** *(պարտատոմսերի դեպքում)*

Կոճակի միջոցով ընտրե՛ք պատվերի տեսակը՝ **լիմիտային (LMT)** կամ **շուկայական (MKT)** **

Եթե ակտիվացրել եք լիմիտային պատվերը, նշե՛ք **գինը** կամ **եկամտաբերությունը** *(պարտատոմսերի դեպքում)*

Ընտրե՛ք պատվերի վավերականությունը՝ **DAY** *(հասանելի է մեկ առևտրային նստաշրջանի ընթացքում)* կամ **GTC***** *(հասանելի է մինչև կատարումը կամ ձեր կողմից չեղարկումը)*




*Անվանական ծավալը կարտացոլվի հաջորդ տողում
**LMT պատվերի դեպքում պատվերը կտեղադրվի Ձեր կողմից նշված գնով, MKT դեպքում՝ շուկայական գնով
***որոշ արժեթղթերի, օրինակ՝ AMX-ում ցուցակված պատվերնների դեպքում GTC տարբերակը հասանելի չէ

# 5

## Ստուգե՛ք պատվերի մանրամասները

«**Ստուգել**» կոճակը սեղմելուց հետո բացված պատուհանում ստուգե՛ք պատվերի վավերապայմանները

Եթե ամեն ինչ ճիշտ է, սեղմե՛ք **«Տեղադրել պատվեր»** կոճակը



6

# Ամփոփե՛ք պատվերը

Պատվերը տեղադրելուց հետո կարող եք հետևել Ձեր տեղադրած պատվերների կարգավիճակին, ինչպես նաև տեսնել կատարված գործարքների պատմությունը:






# Ինչպե՞ս չեղարկել արժեթղթի պատվերը

# Ընտրե՛ք չեղարկվող պատվերը

Պատվերների դաշտում ընտրե՛ք չեղարկման ենթակա* պատվերը

Բացված պատուհանում սեղմե՛ք **«Չեղարկել պատվերը»** կոճակը




*Չեղարկման ենթակա են դեռ չկատարված պատվերները, որոնք արտացոլվում են «**Պատվերներ**» բաժնում*

2

# Հաստատե՛ք չեղարկումը

Սեղմե՛ք **«Այո»** կոճակը, եթե վստահ եք, որ ցանկանում եք չեղարկել պատվերը

**«Այո»** կոճակը սեղմելուց հետո կտեսնե՛ք չեղարկումը հաստատող պատուհան



# Ինչպե՞ս հասկանալ պատվերների կարգավիճակը

# Պատվերի կարգավիճակի փոփոխումը

**«Պատվերներ»** բաժնում երևում են Բանկի կողմից ընդունված պատվերները

**«Գործարքներ»** մոդուլի **«Գործարքներ»** բաժնում երևում են **«Կատարված»** պատվերները

Եթե պատվերը կատարվել է, սակայն դեռ գտնվում է ձևակերպման փուլում, այն ունի **«Հաշվառված չէ»** կարգավիճակ

Հաշվառվելուց հետո փոփոխությունները կարտացոլվեն **«Պորտֆել»** մոդուլում






# Պատվերների կարգավիճակները

| ԿԱՐԳԱՎԻՃԱԿ | ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|
| Ընդունված է | Պատվերը ստացված է բանկի կողմից |
| Գործող | Պատվերը տեղադրվել է բորսայում |
| Մասնակի բավարարված | Պատվերը բավարարվել է մասամբ |
| Չեղարկվում է | Չեղարկման հայտը ստացվել է բանկի կողմից |
| Չեղարկված է | Պատվերը չեղարկվել է Ձեր կողմից |
| Մասնակի չեղարկված է | Պատվերի չեղարկումը կատարվել է մասամբ, քանի որ մյուս մասն արդեն կատարվել է |
| Մերժված է | Պատվերի կատարումը մերժվել է բանկի կողմից կամ չի բավարարվել բորսայում |
| Հաշվառված չէ | Պատվերը կատարվել է բորսայում և գտնվում է բանկի կողմից ձևակերպման փուլում: Այս կարգավիճակի պարագայում գործարքի արդյունքում գոյացած դրամական միջոցները/արժեթղթերը հասանելի են այլ գործարքների կատարման համար: |

# Ինչպե՞ս հետևել արժեթղթերի պորտֆելին

# Պորտֆել մոդուլի բաժինները

**«Պորտֆել»** մոդուլը ցույց է տալիս այն բոլոր արժեթղթերը, որոնց Դուք տիրապետում եք, ինչպես նաև դրանց հետ կապված կարևոր տեղեկատվությունը

Հարմարության համար Ձեր արժեթղթերը բաժանված են **«Բաժնետոմսեր»** և **«Պարտատոմսեր»** բաժինների

**«Միջոցներ»** բաժնում երևում է Ձեր բրոքերային հաշվում առկա դրամական միջոցների չափը



# Ձեր պորտֆելի արժեքը

**«Պորտֆել»** մոդուլ վերևի հատվածում ցուցադրվում է Ձեր պորտֆելի՝ բաժնետոմսերի, պարտատոմսերի և դրամային միջոցների հանրագումարը

Պորտֆելի արժեքի և/կամ արժեթղթի գնի աճը կամ նվազումը երևում է 2-րդ տողում (▲) կամ (▼) նշաններով



# Ձեր բրոքերային հաշիվները

**«Իմ հաշիվը»** մոդուլում երևում են Ձեր բրոքերային և պահառության հաշիվների բացման պայմանագրերը

Եթե նոր եք բացում բրոքերային հաշիվ, ապա **«Մշակվում է»** կարգավիճակը ցույց է տալիս, որ հայտը մշակվում է Բանկի կողմից



# Շնորհակալություն

Ձեր բրոքերային գործարքները
**MyInvest**-ով կատարելու համար